# ԿԵՆԴԱՆԻ ԹՈՒԵՐ

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՒ ՕՐԻՆԱԿՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԺՈՂՈՎԱԾՈՒ։

Ա. ՏԱՐԻ

ԿԱԶՄԵՑ Մ. ՄԻՐՈՒՆԵԱՆ

Թ Ի Ֆ Լ Ի Ս
Տպարան «ԿՈՒԼՏՈՒՐԱ» Միխայլովսկայա 102։
1914

A II/12130















ՄԷԿ 1













ԵՐԿՈՒ 2

















ԵՐԵՔ 3













ՉՈՐՍ 4









ՀԻՆԳ 5













վեց 6

4-ое Авлабарское Начальное Училище г. Тифлиса * Печать











եօթ 7











ութ 8













ԻՆԸ 9













ՏԱՍԸ 10






ՄԷԿ ԿՈՊԷԿ




ԵՐԿՈՒ ԿՈՊԷԿ




ԵՐԵՔ ԿՈՊԷԿ




ՀԻՆԳ ԿՈՊԷԿ




ՏԱՍԸ ԿՈՊԷԿ

# Գումարումն




1. Մարիամը մի կոպէկ ունէր. մէկն էլ ես տւեցի նրան։ Այժմ քանի՞ կոպէկ ունի Մարիամը։

2. Մայրիկս մի խնձոր ինձ տւեց, մէկը—քրոջս։ Քանի՞ խնձոր բաժանեց մայրիկս։

3. Առաւօտը 2 երես կարդացի, երեկոյեան 1 երես։ Քանի՞ երես կարդացի ես այսօր։

4. Ես երկու տետր ունէի, մէկն էլ առայ։ Քանի՞ տետր ունեմ ես։

5. Մի տղայ պատահեց իր երկու ընկերոջը, և նրանց հետ գնաց զբօսնելու։ Քանի՞ հոգի գնացին զբօսնելու։

6. Մեր դպրոցն այսօր 2 տղայ մտան ու 3 աղջիկ։ Քանի՞ երեխայ մտան այսօր մեր դպրոցը։

7. Գիւղացին 3 ոչխար ունէր, երկուսն էլ առաւ։ Այժմ քանի ոչխար ունի նա։



8. Երկու երեխայ լողանում են, երեքն էլ արդէն լողացել, հագնւում են։ Քանի՞ երեխայ էին գնացել գետը լողանալու։

9. Պետիկին 4 ընկոյզ հայրը տւեց, 2 ընկոյզ մայրը։ Քանի՞ ընկոյզ ստացաւ Պետիկը։

ԱԿԱԴԵՄԻԱ

504



371.33
U-55



10. Բնի մէջ նստած էին 4 Թռչնակ։ Երկու թռչուն եկան նրանց կերակրելու։ Այժմ քանի՞ թռչուն են բնի մէջ։

11. Դասարանում մի նստարանի վրայ նստած են 3 աշակերտ, միւսի վրայ—4։ Երկու նստարանի վրայ քանի՞ աշակերտ են նստած։

12. Երկու երեխայ մի գրւանքա խաղող առան. մէկը տւեց 4 կոպէկ, միւսը 3 կոպէկ։ Ի՞նչ արժէր խաղողի գրվանքան։

13. Խնձորն արժէ 3 կոպէկ, տանձը— 4 կոպէկ։ Ի՞նչ արժէն միասին մի տանձն ու մի խնձորը։

14. Մեր տանը 5 տղայ կայ, 2 աղջիկ։ Մեր տանը քանի՞ երեխայ կայ։

15. Վարդանը 2 տետրակ ունէր, Գէորգը—5։ Երկուսը միասին քանի՞ տետրակ ունէին։

16. Մեր պարտէզում 4 տանձի ծառ կայ, 4 խնձորի ծառ։ Քանի՞ ծառ կայ մեր պարտէզում։

17. Աշակերտը մի գրիչ առաւ ու մի մատիտ։ Գրիչն արժէ 3 կոպէկ, իսկ մատիտը 5 կոպէկ։ Ո՞րքան փող ծախսեց աշակերտը։

18. Հայրիկը 3 խնձոր տւեց Արամին, մայրիկը—5։ Քանի՞ խնձոր ստացաւ Արամը։

19. Գրիգորը 4 տետրակ առաւ, Պետրոսը նոյնքան։ Երկուսը միասին քանի՞ տետրակ առան։

20. Ուսուցիչը մի աշակերտի 6 գրիչ ընծայեց, միւսին 3։ Քանի՞ գրիչ բաժանեց ուսուցիչը։

21. Ես 7 ձուկ որսացի, քոյրս — 2։ Միասին քանի՞ ձուկ որսացինք։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0014005

ЦЕНА
12 130